DOI: 10.54503/1829-4324.2025.1-32

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հոդվածը ստացվել է՝ 10.03.25, ուղարկվել է գրախոսման՝ 18.03.25, երաշխավորվել է տպագրության՝ 11.07.25

Ներածություն: Համաշխարհային և տարածաշրջանային արտաքին տնտեսական հարաբերությունների շարունակաբար խորացող գլոբալացման և տնտեսական ինտեգրման պայմաններում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա էական ազդեցություն ունի արտաքին առևտուրը: Հատկապես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար արտաքին առևտրի դերը վճռորոշ է, քանի որ այն ոչ միայն նպաստում է տնտեսության զարգացմանը, այլև մեծացնում է շուկաների հասանելիությունը, նոր տեխնոլոգիաների ներհոսքը և ներդրումների ներգրավումը: Արտաքին առևտուրը հնարավորություն է տալիս փոքր երկրներին մրցակցել միջազգային շուկայում՝ ապահովելով տնտեսական աճի կայունության որոշակի մակարդակ:

Հայաստանի Հանրապետությունը, ունենալով համեմատաբար փոքր տնտեսություն, էապես կախված է ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման գործարքներից: Արտահանման աճը նպաստում է արտադրության ընդլայնմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական ներուժի ակտիվացմանը: Միևնույն ժամանակ, ներմուծման բարձր մակարդակը կարևոր նշանակություն ունի ներքին շուկայի ապահովման և սպառողական պահանջարկի բավարարման տեսանկյունից: Սակայն արտաքին առևտրային հարաբերությունների արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը կնպաստի տեղական արտադրողների մրցունակության բարձրացմանը և արտաքին շուկաներում հայկական ապրանքների դիրքերի ամրապնդմանը:

Ներկայումս Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականությունը ենթարկվում է տարբեր գլոբալ և տարածաշրջանային գործոնների ազդեցությանը, ինչպիսիք են միջազգային շուկաների փոփոխականությունը, աշխարհաքաղաքական զարգացումները և տնտեսական համագործակցության շրջանակները: Այդ համատեքստում Հայաստանի համար առաջնահերթ խնդիր է դառնում արտահանման դիվերսիֆիկացումը՝ նոր շուկաների հայտնաբերման և բազմազանեցման միջոցով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքների արտադրությանը և արտահանմանը, ինչը թույլ կտա նվազեցնել հումքային կախվածությունը և ամրապնդել տնտեսական կայունությունը: Արտաքին առևտրային ռազմավարության մշակումը պետք է հիմնված լինի գիտական վերլուծությունների, միջազգային փորձի ուսումնասիրման և տեխնոլոգիական զարգացման վրա: Միաժամանակ, անհրաժեշտ է խթանել ներդրումային միջավայրի բարելավումը, աջակցել փոքր

և միջին ձեռնարկություններին և ստեղծել բարենպաստ պայմաններ նորարարությունների և տեխնոլոգիական առաջընթացի համար։

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի վերջին տարիների (2021-2024) արտահանման և ներմուծման հոսքերը և այդ հիման վրա առաջարկել հանձնարարականներ արտաքին առևտրի ռազմավարական հիմնական ուղղությունների մշակման վերաբերյալ։

Նշված հետազոտության հիմնական նպատակին հասնելու համար իրականացվել է մի շարք փոխկապակցված խնդիրների լուծում։ Առաջին հերթին, վերլուծվել են Հայաստանի արտահանման և ներմուծման հիմնական միտումները 2021–2024 թվականների ընթացքում՝ նպատակ ունենալով հասկանալ արտաքին առևտրի կառուցվածքային փոփոխությունները և դինամիկան։ Երկրորդ, կիրառվել են համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ) հաշվարկներ՝ տարբեր ապրանքային խմբերում Հայաստանի արտահանման մրցակցային դիրքերը բացահայտելու նպատակով։ Երրորդ, առանձնացվել են այն ապրանքային խմբերը, որոնցում ներմուծումը զգալիորեն գերազանցում է արտահանմանը, վերլուծվել են այդ կախվածության խորքային պատճառները։ Վերջապես, հիմնվելով վերլուծության արդյունքների վրա, ներկայացվել են ռազմավարական առաջարկություններ՝ ուղղված արտաքին առևտրային քաղաքականության կատարելագործմանը

Գրականության ակնարկ: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային քաղաքականությունն ունի բազմաբնույթ ռազմավարական ուղղություններ, որոնք պայմանավորված են տարածաշրջանային և միջազգային տնտեսական զարգացումներով, ինչպես նաև ազգային տնտեսաքաղաքական շահերով։ Այս ուղղությունները հիմնականում ներառում են՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հետ համագործակցությունը, Եվրամիության (ԵՄ) հետ ընդլայնված գործընկերությունը, միջազգային առևտրային հարաբերությունների խորացումը, ինչպես նաև տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացումը։

Հայաստանի արտաքին առևտրի զարգացումը ենթարկվում է մի շարք քաղաքական և տնտեսական գործոնների ազդեցությանը, ներառյալ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակում տնտեսական ինտեգրումը[1], ինչպես նաև ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) շրջանակներում համագործակցությունը[2]։

Հայաստանը, լինելով փոքր և ցամաքային երկիր, ձգտում է առավելագույնս ինտեգրվել միջազգային առևտրային համակարգին։ Ռ.

[1] Eurasian Economic Commission. (2023). Trade policy and economic integration within EAEU. Moscow: EEC Publications, pp 15-18.

[2] European Union. (2017). Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) between the European Union and Armenia. Brussels: EU Publications, pp. 42-46.

Ավետիսյանը իր հոդվածում նշում է, որ Հայաստանի արտաքին առևտրի ռազմավարական ուղղությունների հիմնական առանցքները ձևավորվում են միջազգային առևտրային միավորումների և երկկողմանի տնտեսական համաձայնագրերի շրջանակներում[1]: Նա մատնանշում է Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամակցության ազդեցությունը տնտեսության վրա[3]:

Արտաքին առևտրի ռազմավարական ուղղությունների ձևավորման ժամանակ հաշվի են առնվում գլոբալ տնտեսության փոփոխվող միտումները: Հայաստանի առևտրային հավասարակշռության վրա ազդող հիմնական գործոններից են տարածաշրջանային քաղաքական լարվածությունը, լոգիստիկ սահմանափակումները, և միջազգային տնտեսական ցնցումները[4]:

Հայաստանը 2017 թվականին ստորագրեց Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (CEPA), որը կարևոր դեր է խաղում եվրոպական շուկաներ ներթափանցելու հարցում: Պ. Հոսեյն և այլք. ուսումնասիրության մեջ նշում են, որ CEPA-ն Հայաստանին տալիս է մրցակցային առավելություններ, հատկապես բարձր տեխնոլոգիաների և ծառայությունների ոլորտներում[5]:

Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը կարևոր դեր է խաղում Իրանի և Չինաստանի հետ առևտրի զարգացման հարցում: Սերգի և այլք. նշում են, որ Հայաստանը դիտարկվում է որպես Պարսից ծոցը Կովկասի հետ կապող կամուրջ, ինչը խթանում է երկրի դերը միջազգային առևտրային միջանցքներում[6]:

Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի զարգացումը, որը կապում է Իրանն ու Վրաստանը: Վ. Գլեբովը շեշտադրում է, որ այս նախագիծը խթանում է առևտրի դիվերսիֆիկացումը և Հայաստանի տնտեսական անկախության ամրապնդումը[7]:

«Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքը կարևոր նախագծերից է, որը նպատակ ունի խթանել Հայաստանի արտաքին առևտուրը՝ կապելով Պարսից ծոցը և Սև ծովը: Ըստ Մ. Նյավոյի և այլոց այս նախագիծը կարող է

---

[3] Avetisyan, R. (2024). Global Geopolitical Competition on the Formation of the South Caucasus Security Complex: The Strategic Modeling of Armenia's Economic Corridor. Armenological Issues, p.14. Retrieved from https://journals.ysu.am/index.php/arm-issues/article/view/11557.

[4] World Bank. (2023). Armenia trade policy review: Challenges and opportunities. Washington, D.C.: World Bank Publications, pp. 10-14.

[5] Hoseini, P., Moradi, A., & Zolghadr, M. (2024). Policymaking of the Islamic Republic of Iran in Securing the Security of the South Caucasus. International Relations Researches p. 37. Retrieved from https://www.iisajournals.ir/article_202832_en.html.

[6] Sergi, B. S., Ostrovskaya, A. A., & Popkova, E. G. (2024). Ecological Footprint of the Modern Economy and the Ways to Reduce It. Springer, p.52. Retrieved from https://link.springer.com/content/pdf/10.1007/978-3-031-49711-7.pdf.

[7] Glebov, V. (2024). The Model Law 'On Digital Healthcare' in the Post-Soviet Space. IEEE Conference on Management and Economics, p. 19. Retrieved from https://ieeexplore.ieee.org/abstract/document/10739536/.

զգալիորեն բարձրացնել Հայաստանի տրանսպորտային տարանցիկ ներուժը և ամրապնդել տարածաշրջանային համագործակցությունը[8]:

Զ. Սաֆարյանը իր ուսումնասիրության մեջ նշում է, որ Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին և ԵՄ-ի հետ համաձայնագրերը միաժամանակ թույլ են տալիս պահպանել երկկողմանի հարաբերությունները, բայց պահանջում են ռազմավարական ճկունություն արտաքին քաղաքականության մեջ[9]:

Արտաքին առևտրի ռազմավարական ուղղությունները ձևավորվում են մի շարք փոխկապակցված սկզբունքների հիման վրա, որոնք ապահովում են երկրի տնտեսական շահերի առավելագույն իրացումը և արդյունավետ ինտեգրումը միջազգային շուկաներ: Առաջին հերթին, հիմնարար նշանակություն ունի համեմատական առավելության սկզբունքը, ըստ որի՝ երկիրը պետք է մասնագիտանա այն ապրանքների արտադրության մեջ, որոնք առավել արդյունավետ են և նվազ ռեսուրսախնայում պահանջում՝ համեմատ այլ երկրների[10]: Այս սկզբունքը հնագույն է, սակայն մինչ օրս մնում է արդիական առևտրային կառուցվածքի ձևավորման գործում:

Բացի այդ, ռազմավարությունը պետք է ձևավորվի նաև մրցակցային առավելության սկզբունքի հիման վրա, որը շեշտադրում է մարդկային կապիտալի որակյալ զարգացումը, նորարարական ներուժի կիրառումը և ինստիտուցիոնալ շրջանակների կատարելագործումը[11]: Սա թույլ է տալիս երկրին ոչ միայն արտահանել այն, ինչ տեխնիկապես կարող է արտադրել, այլ նաև ստեղծել այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք ունեն բարձր արժեք և պահանջարկ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև տնտեսական անվտանգության սկզբունքը, որի շրջանակում կարևորվում է երկրի անկախությունը կենսական կարևորություն ունեցող ապրանքների ապահովման հարցում[12]: Այս մոտեցումը ենթադրում է ռազմավարական ճկունություն՝ արտաքին շուկայում ճնշումներից կամ գլոբալ ցնցումներից պաշտպանվելու համար:

Երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից կարևոր է արտաքին շուկաների դիվերսիֆիկացիայի սկզբունքը: Սա նշանակում է նվազեցնել կախվածությունը մեկ կամ մի քանի առևտրային գործընկերներից՝ ընդլայնելով միջազգային տնտեսական կապերի աշխարհագրական սպեկտրը: Այդ

---

[8] Nyawo, M., Geginat, C., Dessus, S. C., & Nucifora, A. (2024). Reconfiguring Trade to Overcome Geographical Limitations: A Trade and Competitiveness Diagnostic for Armenia. Policy Commons, p. 52. Retrieved from https://policycommons.net/artifacts/17447115/reconfiguring-trade-to-overcome-geographical-limitations/18335815/.

[9] Safaryan, Z. (2024). EU Integration Process in the South Caucasus after the Second Nagorno-Karabakh War. Environment and Society, p. 41. Retrieved from http://www.es.tsu.ge/index.php/es/article/view/194.

[10] Ricardo, D. (1817). On the principles of political economy and taxation. London: John Murray.

[11] Porter, M. E. (1990). The competitive advantage of nations. New York: Free Press.

[12] Baldwin, R. (2016). The great convergence: Information technology and the new globalization. Cambridge, MA: Harvard University Press.

համատեքստում ռազմավարական նշանակություն են ստանում նաև տարածաշրջանային և գլոբալ ինտեգրման գործընթացները, ինչպես օրինակ՝ Եվրասիական Տնտեսական Միությունը կամ համագործակցությունը Եվրոպական միության հետ[13]:

Միևնույն ժամանակ, երկրի առևտրային քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն հումքային արտահանմանը, այլև մատակարարման շղթաների մեջ ներգրավվածության խորացմանը՝ ապահովելով վերամշակված արտադրանքի արտահանում: Այս մոտեցումը բարձրացնում է արտահանման կառուցվածքային արժեքը և նպաստում արդյունաբերականացման գործընթացներին[14]:

Վերջում պետք է ընդգծել նաև այն հանգամանքը, որ ռազմավարական ուղղությունների կայացումը կախված է կիրառվող առևտրային գործիքներից ու պետական խթանման քաղաքականությունից: Դրանք կարող են ներառել արտահանման սուբսիդիաներ, հարկային արտոնություններ, դիվանագիտական աջակցություն, ներդրումային խթաններ և այլն, որոնք նպաստում են արտահանող սուբյեկտների մրցունակության բարձրացմանը[15]: Այսպիսով, արտաքին առևտրի ռազմավարության ձևավորումը պահանջում է համակարգային մոտեցում, որը միավորում է տնտեսական տրամաբանությունը, ինստիտուցիոնալ կարողությունները և միջազգային զարգացումներին արձագանքելու հմտությունը:

Մեթոդաբանություն: Նկատի ունենալով ՀՀ արտաքին առևտրի ռազմավարության մշակման կարևորությունը, դրա լրջությունը երկրի ապագա զարգացման գործում, ինչպես նաև այդպիսի ռազմավարության մշակման բարդությունը և ներկայացվող հոդվածի ծավալի սահմանափակումները կառաջնորդվենք միայն փաստացի իրավիճակի վերլուծությամբ և ավելի մեծ տեղ հատկացնելով ապագա ռազմավարության մշակման եզրափակիչ ուղղություններին:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը հիմնված է քանակական և որակական հետազոտությունների համակցված կիրառման վրա՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ռազմավարական ուղղությունների բազմակողմանի վերլուծություն: Վերլուծության համար օգտագործվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Կենտրոնական բանկի հրապարակած տվյալները: Տնտեսակառուցվածքային փոփոխությունների և արտահանման դիվերսիֆիկացիայի գնահատման համար կիրառվել են համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ)

---

[13] De Lombaerde, P., & Van Langenhove, L. (2007). Regional integration, poverty and social policy. Global Social Policy, 7(3), 277–295.

[14] Gereffi, G., Humphrey, J., & Sturgeon, T. (2005). The governance of global value chains. Review of International Political Economy, 12(1), 78–104. https://doi.org/10.1080/09692290500049805

[15] Organisation for Economic Co-operation and Development (OECD). (2023). Trade policy tools and export promotion strategies. Paris: OECD Publishing.

հաշվարկներ՝ 2021-2024 թվականների առևտրային տվյալների հիման վրա։ Հետազոտության արդյունքում մշակվել են ռազմավարական առաջարկություններ, որոնք կարող են նպաստել Հայաստանի արտաքին առևտրային քաղաքականության զարգացմանը և արտահանման ընդլայնմանը։ Ստացված արդյունքները թույլ են տալիս գնահատել Հայաստանի տնտեսության ներկա դիրքավորումը միջազգային շուկայում և առաջարկել միջոցառումներ տնտեսական կայունության բարձրացման համար։

Համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ-երը) հաշվարկվել են հետևյալ բանաձևով.

$$ՀԱԳ = \frac{Ա - Ն}{Ա + Ն} \quad \text{որտեղ՝}$$

Ա - ն՝ երկրից ապրանքների ու ծառայությունների արտահանման ծավալն է,

Ն - ն՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալն է։

ՀԱԳ-երի մեծությունը տատանվում է [-1, +1] միջակայքում։ Ըստ որում, որքան մեծ է ՀԱԳ-ի դրական նշանակությունը, այնքան ավելի բարձր է արտաքին առևտրի նպատակահարմարությունը (դրա արդյունավետությունը)։ Այս չափանիշը հեղինակների կողմից ընդունվել է որպես արտաքին և փոխադարձ առևտրի արդյունավետության ցուցիչ։

Վերլուծություն: Վերլուծության շրջանակներում ուսումնասիրել ենք Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի դինամիկան 2021-2024 թվականներին՝ համադրելով արտահանման և ներմուծման կառուցվածքային փոփոխությունները։ Հատուկ ուշադրություն է դարձվել համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ) գնահատմանը՝ նպատակ ունենալով բացահայտել երկրի մրցունակության ուժեղ և թույլ կողմերը միջազգային շուկայում։

Աղյուսակ 1-ում բերված են Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածները 2016-2023 թվականներին, արտահայտված միլիոն ԱՄՆ դոլարով։ Տվյալները ներառում են ընթացիկ հաշվի, կապիտալի հաշվի և ֆինանսական հաշվի փոփոխությունները՝ արտացոլելով Հայաստանի արտաքին առևտրային և ներդրումային հոսքերի դինամիկան։

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածների վերլուծությունը 2016-2023 թվականների համար ցույց է տալիս, որ ընթացիկ հաշվի դեֆիցիտը զգալի տատանումներ է ունեցել ուսումնասիրվող ժամանակահատվածում։ 2016-2019 թվականներին դեֆիցիտը շարունակաբար աճել է՝ 2016 թվականի -100.9 մլն ԱՄՆ դոլարից հասնելով -961.1 մլն ԱՄՆ դոլարի 2019 թվականին։ 2020-2021 թվականներին այս ցուցանիշը կրճատվել է՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամով և արտահանման ու ներմուծման կրճատմամբ։ 2022 թվականին ընթացիկ հաշիվն Երրորդ հանրապետության գոյության ամբողջ ժամանակահատվածում առաջին անգամ դրական արդյունք է գրանցել՝ 64.7 մլն ԱՄՆ դոլար, սակայն 2023 թվականին այն կրկին անցել է բացասականի՝ կազմելով -556.3 մլն ԱՄՆ դոլար։

Աղյուսակ 1

ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական հոդվածները 2016-2023թթ., մլն ԱՄՆ դոլար[16]

	2016	2017	2018	2019	2020	2021	2022	2023
1. Ընթացիկ հաշիվ	-100.9	-145.3	-900.5	-961.1	-505.4	-483.0	64.7	-556.3
կրեդիտ	5,300.5	6,491.6	6,860.5	7,822.9	5,626.0	7,001.2	12,638.2	16,396.9
դեբետ	5,401.4	6,637.0	7,761.0	8,784.0	6,131.4	7,484.2	12,573.5	16,953.2
Ապրանքներ և ծառայություններ	-905.8	-1,243.6	-1,752.7	-1,817.1	-1,257.7	-1,115.2	-147.2	-193.7
կրեդիտ	3,564.5	4,410.4	4,927.0	5,819.8	3,857.1	5,039.9	10,117.8	14,338.3
դեբետ	4,470.4	5,654.0	6,679.8	7,636.9	5,114.8	6,155.2	10,265.0	14,532.1
2. Կապիտալ հաշիվ	34.9	55.8	75.0	66.3	179.4	63.5	76.6	60.5
կրեդիտ	45.8	63.4	84.8	77.3	185.4	74.9	83.0	67.0
դեբետ	10.9	7.6	9.8	11.0	6.0	11.4	6.4	6.5
3. Ֆինանսական հաշիվ	-415.8	-530.2	-689.8	-463.0	-691.0	-368.9	268.5	-496.9
Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	-415.8	-530.2	-689.8	-463.0	-691.0	-368.9	268.5	-496.9
Զուտ սխալներ և բացթողումներ	-349.8	-440.7	135.7	431.8	-365.1	50.6	127.2	-1.0

Ընդհանուր առմամբ, 2016-2023 թվականներին Հայաստանի վճարային հաշվեկշիռը զգալի փոփոխությունների է ենթարկվել: 2020-2021 թվականներին տնտեսական անկումը մեծ ազդեցություն են ունեցել առևտրային հաշվեկշռի վրա, սակայն 2022 թվականին որոշակի վերականգնում է արձանագրվել: Այնուամենայնիվ, 2023 թվականին բացասական միտումներն ընդգծում են Հայաստանի արտաքին տնտեսական մարտահրավերները, մասնավորապես՝ արտաքին առևտրի բալանսի և ներդրումային ներհոսքերի կայունության ապահովման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության արտաքին և փոխադարձ առևտրի 2023-2024 թվականների վերլուծությունը ցույց է տալիս արտահանման և ներմուծման ծավալների զգալի փոփոխություններ: 2024 թվականին ընդհանուր արտահանումը կազմել է 13,092.2 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը 2023 թվականի համեմատ աճել է 153.1 տոկոսով:

Միևնույն ժամանակ, ներմուծումը կազմել է 17,066.9 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը 133.8 տոկոս աճ է նախորդ տարվա համեմատ: Այս փոփոխությունները վկայում են այն մասին, որ Հայաստանի արտահանման ծավալներն աճել են ավելի արագ, քան ներմուծումը, ինչը պայմանավորված է նոր շուկաների բացահայտմամբ և արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացմամբ:

ԱՊՀ երկրների հետ առևտրաշրջանառության մեջ նկատվել են էական տատանումներ: Արտահանումը նվազել է 10.4 տոկոսով, սակայն ներմուծումը

[16] Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, 2025, Արտաքին հատվածի վիճակագրություն, https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 9,698.5 միլիոն ԱՄՆ դոլարի։ ԵԱՏՄ երկրների հետ առևտրային հարաբերությունները նույնպես փոփոխությունների են ենթարկվել։ Ռուսաստանից ներմուծումը ավելացել է 2.1 անգամ, մինչդեռ արտահանումը նվազել է 10.7 տոկոսով։ Բելառուսի հետ առևտրային կապերը ավելի կայուն են եղել, արտահանումն աճել է 118.2 տոկոսով, իսկ ներմուծումը գրեթե անփոփոխ մնացել է։ Ղազախստանի և Ղրղզստանի հետ առևտրային հարաբերություններում արտահանումը նվազել է, սակայն Ղազախստանից ներմուծումը զգալիորեն աճել է։

Եվրամիության հետ առևտրաշրջանառությունը նվազել է։ Արտահանումը կազմել է 611.6 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը 13.8 տոկոսով պակաս է նախորդ տարվա համեմատ, իսկ ներմուծումը նվազել է 9.4 տոկոսով՝ կազմելով 2,038.6 միլիոն ԱՄՆ դոլար։ Բելգիայի և Իտալիայի հետ առևտրային հարաբերություններում արտահանման աճ է գրանցվել, մինչդեռ Նիդերլանդների հետ այն զգալիորեն կրճատվել է։

Այլ երկրների հետ առևտրային կապերը զգալիորեն աճել են։ Արտահանումը ավելացել է 2.2 անգամ՝ հասնելով 9,084.5 միլիոն ԱՄՆ դոլարի, սակայն ներմուծումը նվազել է 6.7 տոկոսով։ Արաբական Միացյալ Էմիրություններն ու Չինաստանը դարձել են Հայաստանի արտահանման հիմնական ուղղությունները։ ԱՄԷ արտահանումը աճել է 2.4 անգամ, իսկ Չինաստան՝ 2.6 անգամ։ Իրանի հետ առևտրային հարաբերությունները պահպանել են կայուն աճ, արտահանումը մեծացել է 114.5 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 104.5 տոկոսով։ Իրաքի հետ արտահանումը նույնպես զգալի աճ է գրանցել, մինչդեռ ներմուծումը նվազել է։

Վրաստանի հետ առևտրային հարաբերություններում արտահանումը աճել է 122.6 տոկոսով, սակայն ներմուծումը նվազել է 16.8 տոկոսով, ինչը վկայում է առևտրային ուղղությունների փոփոխության մասին։

Այս միտումները ցույց են տալիս, որ Հայաստանի արտաքին առևտրային հարաբերությունները վերակազմավորվում են։

Աղյուսակ 2-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետության արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքը՝ արտահանման և ներմուծման ծավալների բաշխմամբ ըստ ապրանքային խմբերի 2023-2024 և 2021-2022 թվականների հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածի համար։ Տվյալները ներառում են համեմատական առավելության գործակիցները (ՀԱԳ-երը), որոնք թույլ են տալիս գնահատել Հայաստանի տնտեսության մրցունակությունը տարբեր ապրանքային խմբերում։

2024 թվականին ընդհանուր արտահանումը կազմել է 13,092.2 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը զգալի աճ է 2023 թվականի համեմատ (8,552.0 միլիոն ԱՄՆ դոլար)։ Սակայն ՀԱԳ գործակիցը 2024 թվականին կազմել է -0.132, ինչը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ ներմուծումն ավելի մեծ չափերով է աճել (132 տոկոսով), քան արտահանումը։ 2023 թվականին այս գործակիցը կազմել է -0.197, իսկ 2022-ին և 2021-ին՝ համապատասխանաբար -0.236 և -0.280, ինչը նշանակում

է, որ վերջին տարիներին Հայաստանը շարունակում է մնալ ներմուծող երկիր՝ չնայած որոշ ոլորտներում արտահանման աճին:

Պատրաստի սննդի արտադրանքը 2024 թվականին ունեցել է դրական ՀԱԳ՝ 0.128, ինչը նշանակում է, որ արտահանման ծավալներն ավելի մեծ են եղել, քան ներմուծումը: Սա դրական դինամիկա է, որը շարունակվել է նաև նախորդ տարիներին (2023-ին 0.171, 2022-ին 0.207, 2021-ին 0.179):

Հանքահումքային արտադրանքի ՀԱԳ-ը 2024 թվականին կազմել է -0.050, ինչը փոքր-ինչ բարելավում է 2023-ի (-0.118) ցուցանիշի համեմատ: 2022 թվականին այն կազմել է -0.076, իսկ 2021-ին՝ 0.023: Սա ցույց է տալիս, որ ոլորտում ներմուծումը դեռ գերակշռում է, սակայն արտահանման աճ կա:

Ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստված իրերի ՀԱԳ ցուցանիշը 2024 թվականին կազմել է -0.263, ինչը վատթարացում է 2023 թ-ի (-0.137) համեմատ: Սակայն 2022-ին (-0.151) և 2021-ին (-0.035) այս ցուցանիշը դրական միտում ուներ, ինչը ցույց է տալիս, որ ներմուծման աճը գերազանցել է արտահանման աճին:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ-երի) վերլուծությունը 2021-2024 թվականների համար ցույց է տալիս, որ Հայաստանի տնտեսությունը որոշակի ապրանքային խմբերում շարունակում է պահպանել մրցակցային առավելություն, մինչդեռ այլ ոլորտներում կախվածությունը ներմուծումից մնում է բարձր:

Եզրակացություն: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքի վերլուծությունը 2021-2024 թվականների համար ցույց է տալիս, որ երկիրը շարունակում է մնալ ներմուծման գերակշռությամբ տնտեսություն, չնայած որոշ ապրանքային խմբերում արտահանման աճին: Վերջին տարիներին առևտրային հաշվեկշռի բացասական միտումները հիմնականում պայմանավորված են եղել արդյունաբերական ապրանքների, քիմիական արտադրանքի, մեքենաների և տրանսպորտային միջոցների բարձր ներմուծման մակարդակով:

Համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ) վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն որոշ ապրանքային խմբերում է արտահանումը գերազանցում ներմուծմանը: Մասնավորապես, պատրաստի սննդի արտադրանքն ունի դրական ՀԱԳ, ինչը նշանակում է, որ երկիրը կարողանում է այս ոլորտում մրցակցել միջազգային շուկայում: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների արտահանումը նույնպես շարունակում է գերազանցել ներմուծմանը, ինչը վկայում է Հայաստանի հանքահումքային պաշարների և ադամանդագործության ոլորտի կարևորության մասին:

Միևնույն ժամանակ, բուսական և կենդանական ծագման արտադրանքի, ինչպես նաև քիմիական արդյունաբերության ապրանքների ներմուծումը շարունակում է գերակշռել, ինչը ցույց է տալիս, որ այդ ոլորտներում Հայաստանը

Աղյուսակ 2

Արտաքին և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքը՝ ըստ արտահանման և ներմուծման ծավալների, ըստ ապրանքային բաժինների (2023-2024 և 2021-2022, հունվար-դեկտեմբեր), ըստ համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ-երի, 2021-2024 ՀԱԳ-երի միջին մեծությունների)*

	Արտահանում			Ներմուծում			ՀԱԳ 2022	ՀԱԳ 2021	ՀԱԳ միջին 2021-2024
	2023թ.	2024թ.	ՀԱԳ 2024	2023թ.	2024թ.	ՀԱԳ 2023			
Ընդամենը	8,552,015.1	13,092,206.2	-0.132	12,757,919.4	17,066,882.3	-0.197	-0.236	-0.280	-0.211
այդ թվում՝									
կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	101,319.6	139,415.8	-0.333	249,670.5	278,612.9	-0.423	-0.209	-0.219	-0.296
բուսական ծագման արտադրանք	185,363.4	240,163.7	-0.248	358,732.3	398,787.2	-0.319	-0.303	-0.217	-0.272
կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	1,530.1	2,728.8	-0.929	66,674.7	74,416.5	-0.955	-0.867	-0.998	-0.937
պատրաստի սննդի արտադրանք	892,494.8	954,233.9	0.128	631,756.0	736,971.3	0.171	0.207	0.179	0.171
հանքահումքային արտադրանք	886,783.1	1,020,793.7	-0.050	1,124,354.4	1,127,641.8	-0.118	-0.076	0.023	-0.055

* Կազմվել և հաշվարկվել է հեղինակների կողմից Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Արտաքին առևտրի վիճակագրություն։ Հասանելի է 2025 թվականի [ArmStat պաշտոնական կայքից],(https://armstat.am/am/?nid=82&id=2716, https://armstat.am/am/?nid=81&id=2635, https://armstat.am/am/?nid=81&id=2547) տվյալների հիման վրա։

քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	123,469.0	103,957.1	-0.720	626,984.7	638,147.1	-0.671	-0.751	-0.833	-0.744
պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	71,750.1	62,238.4	-0.696	354,592.6	347,216.8	-0.663	-0.677	-0.844	-0.720
կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	22,060.5	25,740.9	-0.336	42,706.1	51,773.4	-0.319	-0.437	-0.609	-0.425
փայտ և փայտյա իրեր	9,411.7	2,501.0	-0.950	92,230.5	98,072.8	-0.815	-0.904	-0.970	-0.910
թուղթ և թղթից իրեր	5,265.8	5,913.1	-0.929	148,158.8	160,798.6	-0.931	-0.907	-0.962	-0.932
մանածագործական իրեր	357,416.5	371,301.6	-0.303	652,161.7	694,855.8	-0.292	-0.279	-0.243	-0.279
կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	41,776.2	50,123.0	-0.415	117,311.6	121,104.6	-0.475	-0.717	-0.854	-0.615
իրեր քարից, գիպսից, ցեմենտից	37,567.3	42,091.9	-0.639	175,724.7	190,853.9	-0.648	-0.624	-0.687	-0.650
թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	3,219,725.3	8,042,584.1	0.044	2,731,258.4	7,368,902.4	0.082	0.177	0.135	0.110
ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	459,700.5	364,292.8	-0.263	606,058.0	624,897.1	-0.137	-0.151	-0.035	-0.147
մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	1,350,508.8	1,310,404.8	-0.339	2,480,203.8	2,655,422.6	-0.295	-0.413	-0.881	-0.482
վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	586,257.3	141,109.9	-0.732	1,782,394.1	911,027.7	-0.505	-0.485	-0.776	-0.625
սարքեր և ապարատներ	144,913.5	150,685.0	-0.314	266,336.7	288,320.1	-0.295	-0.252	-0.548	-0.352
տարբեր արդյունաբերական ապրանքներ	53,947.9	60,881.9	-0.659	244,274.9	296,295.1	-0.638	-0.658	-0.833	-0.697
արվեստի ստեղծագործություններ	753.5	1,044.9	-0.451	6,334.9	2,764.5	-0.787	-0.474	0.568	-0.286

կախված է արտաքին շուկաներից: Մեքենաների, սարքավորումների և տրանս-պորտային միջոցների ներմուծման աճը վկայում է տեխնոլոգիական կախ-վածության մասին, որը կարող է դառնալ տնտեսական անվտանգության ռիսկ:

2021-2024 թվականների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առևտրային հաշվեկշռի բացասականությունը փոքր-ինչ մեղմվել է 2023-2024 թվականներին, սակայն ներմուծման գերակայությունը դեռևս պահպանվում է: Արտահանման դիվերսիֆիկացիայի հարցում որոշակի դրական միտում է նկատվում, մասնավորապես՝ սննդի արդյունաբերության և թանկարժեք մետաղների ոլորտներում, սակայն արդյունաբերական ապրանքների ներմուծման աճը շարունակում է խոչընդոտել հաշվեկշռի կայունացմանը:

Հաշվի առնելով այս միտումները՝ Հայաստանի համար առաջնահերթություն պետք է լինի ներմուծման փոխարինման և արտահանման խթանման քաղաքականության իրականացումը: Դրա համար անհրաժեշտ է կենտրոնանալ բարձր ավելացված արժեքով և մրցունակ արտադրանքի արտադրության վրա, զարգացնել տեղական արդյունաբերությունը և խթանել տեխնոլոգիական առաջընթացը: Միևնույն ժամանակ, արտահանման դիվերսիֆիկացիան, նոր շուկաների մուտքը և ներդրումների ներգրավումը կարող են էական դեր խաղալ Հայաստանի առևտրային հաշվեկշռի բարելավման գործում:

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ռազմավարական ուղղությունների ձևավորումը պետք է ունենա համակողմանի և համակարգային բնույթ՝ ելնելով տնտեսության ներկա կառուցվածքից, համեմատական առավելության գործակիցների վերլուծությունից և միջազգային առևտրային իրողություններից: Առաջին հերթին, անհրաժեշտ է արտահանման դիվերսիֆիկացում՝ կենտրոնանալով նոր շուկաների հայտնաբերման և արտահանման ապրանքատեսականու ընդլայնման վրա: Այդ նպատակով պետք է պետական մակարդակով մշակվեն ծրագրեր՝ ուղղված Մերձավոր Արևելքի, Ասիայի և Աֆրիկայի շուկաներում հայկական ապրանքների դիրքերի ամրապնդմանը:

Երկրորդ՝ կենսական նշանակություն ունի ներմուծումից կախվածության նվազեցումը՝ խթանելով տեղական արտադրությունը: Պետք է աջակցել այն ոլորտներին, որտեղ Հայաստանը բացահայտել է բացասական համեմատական առավելություն, ինչպիսիք են թղթի, փայտյա արտադրանքի, կենդանական և բուսական յուղերի, ինչպես նաև մեքենաների և սարքավորումների արտադրությունը: Նման մոտեցումը կնպաստի արդյունաբերության զարգացմանը, տեխնոլոգիական անկախության ամրապնդմանը և առևտրային հաշվեկշռի բարելավմանը:

Երրորդ՝ ռազմավարությունը պետք է ներառի բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքի ստեղծման խթանում: Սա պահանջում է արդյունաբերական քաղաքականության վերակառուցում՝ վերամշակման և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում մրցունակ արտադրություն կազմակերպելու նպատակով: Այդ գործընթացում պետք է ակտիվ ներգրավվեն նաև ներդրողները՝ նրանց համար ստեղծելով նպաստավոր և կանխատեսելի ներդրումային միջավայր:

Չորրորդ՝ առանցքային դեր ունի տրանսպորտային և լոգիստիկ ենթակառուցվածքների զարգացումը: «Հյուսիս-Հարավ» միջանցքի և Մեղրիի ազատ տնտեսական գոտու ամբողջական գործարկումը կբարձրացնեն Հայաստանի տարանցիկ ներուժը և կապահովեն ապրանքների արագ և մրցունակ տեղափոխում դեպի արտաքին շուկաներ: Հետևաբար, արտաքին առևտրային ռազմավարության կարևոր բաղադրիչ պետք է լինի լոգիստիկայի արդիականացումը:

Հինգերորդ՝ արտահանման խթանման համար անհրաժեշտ է կիրառել տնտեսական գործիքներ, այդ թվում՝ հարկային արտոնություններ, սուբսիդիաներ և դիվանագիտական աջակցություն արտահանող ձեռնարկություններին: Այս միջոցներն անհրաժեշտ են արտահանման խոչընդոտների նվազեցման և արտահանողների մրցունակության բարձրացման համար:

Վեցերորդ՝ ռազմավարության մեջ պետք է ընդգրկվի նաև կրթության և մարդկային կապիտալի զարգացման բաղադրիչը՝ ուղղված աշխատաշուկայի համապատասխանեցմանը արտահանման կենտրոնացված արտադրությանը: Պետք է ձևավորվի միջին մասնագիտական և ինժեներատեխնիկական ուղղվածության ուսուցման համակարգ, որը կծառայի որպես հենք տեղական արդյունաբերության զարգացման համար:

Երկարաժամկետ տեսանկյունից արտաքին առևտրային ռազմավարությունը պետք է կառուցված լինի միջազգային զարգացումներին արձագանքելու ունակության, ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման և տեխնոլոգիական առաջընթացի խթանման վրա: Այս բոլոր ուղղությունների իրականացումն ի մի բերելով՝ հնարավոր կլինի ստեղծել կայուն, մրցունակ և ինքնաբավ տնտեսություն, որը լիարժեք ինտեգրված կլինի միջազգային շուկաներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ricardo, D. (1817). On the principles of political economy and taxation. London: John Murray.
2. Porter, M. E. (1990). The competitive advantage of nations. New York: Free Press.
3. Baldwin, R. (2016). The great convergence: Information technology and the new globalization. Cambridge, MA: Harvard University Press.
4. De Lombaerde, P., & Van Langenhove, L. (2007). Regional integration, poverty and social policy. Global Social Policy, 7(3), 277–295.
5. Gereffi, G., Humphrey, J., & Sturgeon, T. (2005). The governance of global value chains. Review of International Political Economy, 12(1), 78–104. https://doi.org/10.1080/09692290500049805
6. Organisation for Economic Co-operation and Development (OECD). (2023). Trade policy tools and export promotion strategies. Paris: OECD Publishing.
7. European Union. (2017). Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) between the European Union and Armenia. Brussels: EU Publications, pp. 42–46.
8. Eurasian Economic Commission. (2023). Trade policy and economic integration within EAEU. Moscow: EEC Publications, pp. 15–18.

9. World Bank. (2023). Armenia trade policy review: Challenges and opportunities. Washington, D.C.: World Bank Publications, pp. 10–14.
10. Hoseini, P., Moradi, A., & Zolghadr, M. (2024). Policymaking of the Islamic Republic of Iran in securing the security of the South Caucasus. International Relations Researches, p. 37. https://www.iisajournals.ir/article_202832_en.html
11. Sergi, B. S., Ostrovskaya, A. A., & Popkova, E. G. (2024). Ecological footprint of the modern economy and the ways to reduce it. Springer, p. 52. https://link.springer.com/content/pdf/10.1007/978-3-031-49711-7.pdf
12. Glebov, V. (2024). The model law 'On digital healthcare' in the post-Soviet space. IEEE Conference on Management and Economics, p. 19. https://ieeexplore.ieee.org/abstract/document/10739536/
13. Nyawo, M., Geginat, C., Dessus, S. C., & Nucifora, A. (2024). Reconfiguring trade to overcome geographical limitations: A trade and competitiveness diagnostic for Armenia. Policy Commons, p. 52. https://policycommons.net/artifacts/17447115/reconfiguring-trade-to-overcome-geographical-limitations/18335815/
14. Safaryan, Z. (2024). EU integration process in the South Caucasus after the Second Nagorno-Karabakh War. Environment and Society, p. 41. http://www.es.tsu.ge/index.php/es/article/view/194
15. Avetisyan, R. (2024). Global geopolitical competition on the formation of the South Caucasus security complex: The strategic modeling of Armenia's economic corridor. Armenological Issues, p. 14. https://journals.ysu.am/index.php/arm-issues/article/view/11557
16. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ։ (2025). Արտաքին հատվածի վիճակագրություն։ https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx
17. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե։ (2024). Հայաստանի արտաքին առևտրի վիճակագրություն։ Վերցված 2025 թ. մարտի 6-ին՝ https://armstat.am/am/?nid=82&id=2716, https://armstat.am/am/?nid=81&id=2635, https://armstat.am/am/?nid=81&id=2547

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Համառոտագիր

Հոդվածի արդիականությունը։ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի վերլուծությունը 2021-2024 թվականների համար ցույց է տալիս, որ տնտեսությունը որոշ ապրանքային խմբերում շարունակում է պահպանել արտահանման գերակայություն, մինչդեռ ներմուծումը զգալիորեն գերակշռում է հատկապես արդյունաբերական ապրանքների դեպքում։ Տեղական արտադրության զարգացման դանդաղ տեմպերը և որոշ ապրանքային խմբերի ներմուծման գերակայությունը սահմանափակում են տնտեսական

կայունությունն ու ինքնաբավությունը։ Այս իրավիճակը պահանջում է համապարփակ քաղաքականության մշակում՝ ուղղված արտահանման խթանմանը, արտադրության արդիականացմանը և նոր շուկաների ընդլայնմանը։

Հոդվածի նպատակն է վերլուծել Հայաստանի արտաքին առևտրի կառուցվածքը՝ համեմատական առավելության գործակիցների (ՀԱԳ) մեթոդի կիրառմամբ, բացահայտել ներմուծումից կախվածության հիմնական պատճառները և առաջարկել ռազմավարական ուղղություններ, որոնք կնպաստեն արտահանման դիվերսիֆիկացիային և տեղական արտադրության խթանմանը։

Նշված նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ **խնդիրները**՝

- ✓ ուսումնասիրել Հայաստանի արտահանման և ներմուծման հիմնական միտումները 2021-2024 թվականների ընթացքում,
- ✓ վերլուծել համեմատական առավելության գործակիցները (ՀԱԳ) ըստ ապրանքային խմբերի՝ արտահանման մրցակցային առավելության բացահայտման նպատակով,
- ✓ հայտնաբերել ներմուծումից առավել կախված ապրանքային խմբերը և դրանց վրա ազդող գործոնները,
- ✓ Առաջարկել ռազմավարական մոտեցումներ, որոնք կնպաստեն արտաքին առևտրային քաղաքականության բարելավմանը և արտահանման խթանմանը։

Հետազոտության շրջանակներում կիրառվել են քանակական և որակական վերլուծության մեթոդներ՝ ապահովելով Հայաստանի արտաքին առևտրի համակողմանի ուսումնասիրությունը։ Տվյալները ստացվել են Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, Կենտրոնական բանկի հաշվետվություններից։ Արտահանման մրցունակության գնահատման համար օգտագործվել են համեմատական առավելության գործակիցները (ՀԱԳ)։

Ստացված հիմնական արդյունքները.

- ✓ պատրաստի սննդի արտադրանքի (ՀԱԳ միջին՝ 0.171) և թանկարժեք մետաղների (ՀԱԳ միջին՝ 0.110) ոլորտներում արտահանումը պահպանել է մրցակցային առավելություն, սակայն 2024 թվականին որոշակի անկում է գրանցվել,
- ✓ կենդանական և բուսական ծագման յուղերը (-0.937), թուղթը (-0.932), փայտյա արտադրանքները (-0.910) ամբողջությամբ ներմուծումից կախված են, ինչը վկայում է տեղական արտադրության բացակայության կամ թերզարգացածության մասին,
- ✓ մեքենաների և սարքավորումների ոլորտում (-0.482) ներմուծումը գերակշռում է արտահանմանը, ինչը ցույց է տալիս տեխնոլոգիական ինքնաբավության պակասը,
- ✓ արտահանման դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը դառնում է ակնհայտ, քանի որ որոշ ապրանքային խմբերում Հայաստանի

արտահանման առավելությունը նվազում է, ինչը կարող է հետագայում բացասաբար ազդել առևտրային հաշվեկշռի վրա։

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունը: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել՝

- տնտեսական քաղաքականություն մշակողների կողմից՝ ներմուծումից կախվածության նվազեցման և արտահանման դիվերսիֆիկացման ռազմավարությունների մշակման համար,
- բիզնես համայնքի համար՝ արտահանման նոր հնարավորությունների բացահայտման և արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով,
- միջազգային համագործակցության շրջանակներում՝ ներդրումների ներգրավման և առևտրային համաձայնագրերի բարելավման համար։

Այս վերլուծությունը հիմք է հանդիսանում Հայաստանի արտաքին առևտրի զարգացման նոր հայեցակարգի մշակման համար, որը կարող է ապահովել տնտեսական կայունություն, բարձրացնել երկրի մրցունակությունը և նպաստել միջազգային շուկայում հայկական արտադրանքի ամրապնդմանը։

Բանալի բառեր: Արտաքին առևտուր, Արտահանման դիվերսիֆիկացում, Տնտեսական ինտեգրում, Մրցունակություն, Տեխնոլոգիական զարգացում, Ներդրումային միջավայր, Արտաքին տնտեսական քաղաքականություն, Լոգիստիկ ենթակառուցվածքներ։

СТРАТЕГИЧЕСКИЕ НАПРАВЛЕНИЯ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АШОТ МАРКОСЯН
МЕРУЖАН МАРКОСЯН

Аннотация

Актуальность статьи. Анализ внешней торговли Республики Армения за 2021–2024 годы показывает, что экономика сохраняет преимущество в экспорте отдельных групп товаров, в то время как импорт значительно преобладает, особенно в отношении промышленных товаров. Медленные темпы развития местного производства и доминирование импорта в некоторых товарных группах ограничивают экономическую устойчивость и самодостаточность. Данная ситуация требует разработки комплексной политики, направленной на стимулирование экспорта, модернизацию производства и расширение рынков сбыта.

Цель статьи – проанализировать структуру внешней торговли Армении с применением метода коэффициентов сравнительного преимущества (КСП), выявить основные причины зависимости от импорта и предложить стратегические направления, способствующие диверсификации экспорта и развитию местного производства.

Для достижения данной цели поставлены следующие задачи:

- ✓ изучить основные тенденции экспорта и импорта Армении в 2021–2024 годах,

- ✓ проанализировать коэффициенты сравнительного преимущества (КСП) по товарным группам с целью выявления конкурентных преимуществ в экспорте,
- ✓ определить товарные группы, наиболее зависимые от импорта, и факторы, влияющие на эту зависимость,
- ✓ предложить стратегические подходы к совершенствованию внешнеторговой политики и стимулированию экспорта.

В рамках исследования применены количественные и качественные методы анализа, обеспечивающие комплексное изучение внешней торговли Армении. Данные получены из отчетов Статистического комитета Республики Армения и Центрального банка. Для оценки конкурентоспособности экспорта использованы коэффициенты сравнительного преимущества (КСП).

Основные полученные результаты:

В отраслях производства готовых пищевых продуктов (средний КСП – 0,171) и драгоценных металлов (средний КСП – 0,110) экспорт сохраняет конкурентное преимущество, однако в 2024 году зафиксировано некоторое снижение.

- ✓ Жиры животного и растительного происхождения (-0,937), бумага (-0,932), изделия из дерева (-0,910) полностью зависят от импорта, что свидетельствует об отсутствии или недостаточном развитии местного производства.
- ✓ В сфере машин и оборудования (-0,482) импорт значительно превышает экспорт, что указывает на недостаточную технологическую самодостаточность.
- ✓ Необходимость диверсификации экспорта становится очевидной, поскольку конкурентное преимущество Армении в некоторых товарных группах снижается, что в перспективе может негативно сказаться на торговом балансе.

Ключевые слова. Внешняя торговля, Диверсификация экспорта, Экономическая интеграция, Конкурентоспособность, Технологическое развитие, Инвестиционный климат, Внешнеэкономическая политика, Логистическая инфраструктура.

STRATEGIC DIRECTIONS OF THE FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT MARKOSYAN
MERUZHAN MARKOSYAN

Abstract

Relevance of the Article: An analysis of Armenia’s foreign trade for the period 2021-2024 reveals a continued pattern of export specialization in specific product groups, alongside a significant and persistent dominance of imports (particularly in industrial goods). The sluggish pace of domestic production development and Armenia’s reliance on imported goods in key sectors pose risks to economic stability and limit the country's self-sufficiency. These trends highlight the urgent need for a comprehensive foreign trade strategy aimed at stimulating exports, modernizing local production, and diversifying target markets.

Aim and Objectives of the Article: The aim of this article is to analyze the structure of Armenia's foreign trade through the application of the Revealed Comparative Advantage (RCA) methodology, identify the underlying causes of import dependence, and propose strategic directions for export diversification and industrial development. To achieve this objective, the study sets out to:

- Examine key trends in Armenia's exports and imports during 2021-2024.
- Apply RCA analysis by product groups to identify areas of export competitiveness.
- Identify the most import-dependent product categories and their determining factors.
- Propose strategic recommendations to enhance foreign trade policy and promote export-oriented growth.

Research Methodology: The study adopts both quantitative and qualitative research methods to ensure a comprehensive evaluation of Armenia's foreign trade dynamics. Data were sourced from the Statistical Committee of the Republic of Armenia and reports from the Central Bank. Export competitiveness was assessed using the Revealed Comparative Advantage (RCA) index.

Key Findings:

- Processed food products (average RCA: 0.171) and precious metals (average RCA: 0.110) maintained a competitive advantage, although both declined slightly in 2024.
- Product groups such as animal and vegetable oils (RCA: -0.937), paper (RCA: -0.932), and wood products (RCA: -0.910) remain entirely import-dependent, indicating a lack of domestic production capacity.
- In the machinery and equipment sector (RCA: -0.482), the dominance of imports underscores Armenia's technological dependence.
- The gradual decline in comparative advantage across several export categories suggests a growing need for export diversification, as sustained import dominance may increasingly threaten the country's trade balance and economic resilience.

Keywords: foreign trade, export diversification, economic integration, competitiveness, technological development, investment climate, foreign economic policy, logistics infrastructure